**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Փաշաբեզեանի Ամանորեայ շնորհաւորական ուղերձը**

Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործընթացը այնքան նուրբ ու պատասխանատու դաշտում ու ոլորտում է, որ այն չի կարող իրականացուել անօրինականութիւնների ու ապօրինութիւնների ճանապարհով: Առանց այդ էլ գոյութիւն ունեցող խոչընդոտներն ու արգելքները շատ են, յաճախ անտեսանելի ու բազմաշերտ:

Այդ իմաստով պատասխանատու այն ժամանակաշրջանը, որ մենք միասին անցանք 2014 եւ 2017 թթ. ընթացքում, վճռական էր օրինականութեան ու իրաւականութեան դաշտում գործելու եւ պայքարը այդպէս շարունակելու տեսակէտից:

Յիշեցնենք, որ հանդէս բերելով քաղաքացիական, քաղաքական կամային բարձր յատկանիշներ ու որակներ, 2017 թ. յունիսի 11-ին գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում պատգամաւորները կայացրեցին որոշումներ, որոնք սկզբունքային նշանակութիւն ունէին ապօրինի հրամանագրերից ու ոտնձգութիւններից պաշտպանելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան համակարգի պաշտօնեաներին, պատգամաւորներին, քաղաքացիներին, պահպանելու համակարգի թեւերի՝ նախագահական, կառավարութիւն, խորհրդարան ազատութիւնը, անկախութիւնը, լիակատար համագործակցութիւնը, պաշտպանելու հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործընթացը արտաքին եւ ներքին ոտնձգութիւններից ու թելադրանքներից:

Այսուհետ եւս, գործելով իրաւունքի ու օրինականութեան դաշտում, վճռական ենք շարունակելու Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործը եւ համոզուած ենք, որ միայն այդպէս կարելի է յաջողութեան հասնել:

Բարձր գնահատելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի բոլոր պաշտօնեաների ու պատգամաւորների, գործընկերների ու ընկերների, համակիրների ու համախոհների մասնակցութիւնը՝ սրտանց շնորհաւորում ենք նրանց ու մեր ժողովրդի Նոր Տարին ու Սուրբ Ծնունդը:

Վճռական ենք միասին շարունակելու պայքարը, եւ յաղթանակը մերն է լինելու:

**Տիգրան Փաշաբեզեան**
**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ**
**01.01.2018 թ.**